# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ա/Ձ Լևոն Սողոյան-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 12 | Ա/Ձ Լևոն Սողոյան | Ա/Ձ Լևոն Սողոյան | Կոստյում` ամենօրյա ԱԱԾ (Կոստյում` կիսաբրդյա, ամենօրյա ԱԱԾ) Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի 235 գրամ մակերեսային խտությամբ, 44% բուրդ, 54% պոլիէսթեր և 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից (ըստ նմուշի): Գործվացքի բաղադրությունը` համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը` համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը` լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոն: Բաճկոնը` միալանջ, թիկունքամասը` ծավալուն, կոճկվում է կենտրոնական շղթայական կոճկվածքով` երկկողմանի կայծակ շղթայով: Կենտրոնական շղթայի (տրակտոր տեսակի, խոշոր ատամնավոր № 5 կամ 6) վրայից երկայնակի 5.5-6.0 սմ լայնության կափույրով, որը կայծակ շղթաի վրայից կոճկվում է փակ, գաղտնի կոճկվածքով 4 հատ կոճգամով: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոնի առաջամասում ամբողջ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | երկայնքով մշակվում է աստառը՝ ԳՕUS-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք կանաչավուն գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը՝ 100% վիսկոզա: Բաճկոնի օձիքը ծալովի, օձիքի անկյունային եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14.5-15.0 սմ լայնության և 16-17 սմ երկարության երկու գրպաններ, որոնց 5.0-5.5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են կոճկվում են 2.5×2.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններով, իսկ գրպաների կողերը դեպի կենտրոնական շղթա գաղտնի ներկարված են կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 18.0-18.5 սմ բացվածքով, 1.5-2.0 սմ լայնության շերտիկով գրպաններ, որոնք կոճկվում են կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան: Բաճկոնի կողամասերում՝ ներքևի գրպաների վերին եզրին զուգահեռ բարձրության վրա, մշակվում են երկու կոճակով կարգավորվող զույգ պատաներ: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններ կրծքանշանների փակցման համար: Թևքերի վրա ուսակարից 8.5-9.0 սմ ներքև մշակված են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ և աջ թևքերի վրա մշակվում են սեպաձև տեսքով 7.0x9.0 սմ չափսի ասեղնագործ կամ մեռու գործվածքով (merrow) ՀՀ զինանշանը (վահանը համապատասխան եռագույն գունավորմամբ) և ՀՀ ԱԱԾ խորհրդանշանը (ՀՀ դրոշը համապատասխան եռագույն գունավորմամբ): Թևքերի ներքևի եզրերը կոճկվում են զույգ կոճգամներով: Բազկակալի լայնությունը՝ 6.5-7.5 սմ: Ինքնակպչուններով ամրացվող ասեղնագործ կամ մեռու գործվածքով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կրծքանշանների, տարբերանշանների նմուշները և քանակները կտրամադրվեն ՊՍ-ի կողմից, հաստատման համար ներկայացված նմուշների հաստատումից հետո՝ հինգօրյա ժամկետում: Տաբատ: Ազատաթող տաբատը բաղկացած է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով է, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից է: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով՝ 5.5-6.0 սմ լայնության,որը կոճկվում է 2.5×2.5 սմ չափսերի կանաչ երանգի կպչուն ժապավեններով: Գուլֆիկը մշակվում է նեյլոնե կայծակ շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 4.0-4.5 սմ լայնությամբ, վրան մշակված են 7 կամ 8 հատ 5.0 սմ երկարության կամրջակներ, որոնցից մեկը հետևամասի կարի վրա: Կողային կարերում անցկացվում է 1.5-2.0 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կապույտ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում՝ մինչև ծնկների նեքին հատվածը, մշակվում է ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք մուգ կանաչավուն գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը՝ 100 % վիսկոզա: Պիտակավորումը: Բաճկոնի ծոցագրպանին և տաբատի գոտու ներսի մասին պետք է կարված լինի պիտակ կամ պիտակներ: Պիտակի (պիտակների) վրա նշված՝ տեսականու չափսը, ապրանքի անվանումը, խնամքի վերաբերյալ գրառումներ և սիմվոլներ, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և մրցույթի համարը: Բաճկոնի կենտրոնական շղթայի շնիկի վրա պետք է կախված լինի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը, մրցույթի համարը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ա/Ձ Լևոն Սողոյան в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 12 | Ա/Ձ Լևոն Սողոյան | Ա/Ձ Լևոն Սողոյան | Կոստյում՝ ամենօրյա ԱԱԾ (Կոստյում՝ կիսաբրդյա, ամենօրյա ԱԱԾ) Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի 235 գրամ մակերեսային խտությամբ, 44% բուրդ, 54% պոլիէսթեր և 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից (ըստ նմուշի): Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոն: Բաճկոնը՝ միալանջ, թիկունքամասը՝ ծավալուն, կոճկվում է կենտրոնական շղթայական կոճկվածքով՝ երկկողմանի կայծակ շղթայով: Կենտրոնական շղթայի (տրակտոր տեսակի, խոշոր ատամնավոր № 5 կամ 6) վրայից երկայնակի 5.5-6.0 սմ լայնության կափույրով, որը կայծակ շղթաի վրայից կոճկվում է փակ, գաղտնի կոճկվածքով 4 հատ կոճգամով: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոնի առաջամասում ամբողջ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | երկայնքով մշակվում է աստառը` ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք կանաչավուն գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը` 100% վիսկոզա: Բաճկոնի օձիքը ծալովի, օձիքի անկյունային եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14.5-15.0 սմ լայնության և 16-17 սմ երկարության երկու գրպաններ, որոնց 5.0-5.5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են կոճկվում են 2.5×2.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններով, իսկ գրպաների կողերը դեպի կենտրոնական շղթա գաղտնի ներկարված են կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 18.0-18.5 սմ բացվածքով, 1.5-2.0 սմ լայնության շերտիկով գրպաններ, որոնք կոճկվում են կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան: Բաճկոնի կողամասերում` ներքևի գրպաների վերին եզրին զուգահեռ բարձրության վրա, մշակվում են երկու կոճակով կարգավորվող զույգ պատաներ: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա` գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններ կրծքանշանների փակցման համար: Թևքերի վրա ուսակարից 8.5-9.0 սմ ներքև մշակված են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ և աջ թևքերի վրա մշակվում են սեպաձև տեսքով 7.0x9.0 սմ չափսի ասեղնագործ կամ մեռու գործվածքով (merrow) ՀՀ զինանշանը (վահանը համապատասխան եռագույն գունավորմամբ) և ՀՀ ԱԱԾ խորհրդանշանը (ՀՀ դրոշը համապատասխան եռագույն գունավորմամբ): Թևքերի ներքևի եզրերը կոճկվում են զույգ կոճգամներով: Բազկակալի լայնությունը` 6.5-7.5 սմ: Ինքնակպչուններով ամրացվող ասեղնագործ կամ մեռու գործվածքով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կրծքանշանների, տարբերանշանների նմուշները և քանակները կտրամադրվեն ՊՍ-ի կողմից, հաստատման համար ներկայացված նմուշների հաստատումից հետո՝ հինգօրյա ժամկետում: Տաբատ: Ազատաթող տաբատը բաղկացած է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով է, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից է: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով՝ 5.5-6.0 սմ լայնության,որը կոճկվում է 2.5×2.5 սմ չափսերի կանաչ երանգի կպչուն ժապավեններով: Գուլֆիկը մշակվում է նեյլոնե կայծակ շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 4.0-4.5 սմ լայնությամբ, վրան մշակված են 7 կամ 8 հատ 5.0 սմ երկարության կամրջակներ, որոնցից մեկը հետևամասի կարի վրա: Կողային կարերում անցկացվում է 1.5-2.0 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կապույտ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում՝ մինչև ծնկների նեքին հատվածը, մշակվում է ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք մուգ կանաչավուն գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը՝ 100 % վիսկոզա: Պիտակավորումը: Բաճկոնի ծոցագրպանին և տաբատի գոտու ներսի մասին պետք է կարված լինի պիտակ կամ պիտակներ: Պիտակի (պիտակների) վրա նշված՝ տեսականու չափսը, ապրանքի անվանումը, խնամքի վերաբերյալ գրառումներ և սիմվոլներ, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և մրցույթի համարը: Բաճկոնի կենտրոնական շղթայի շնիկի վրա պետք է կախված լինի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը, մրցույթի համարը: |